ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/37

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.01.2022թ. թիվ 26/26-1/1571-2022 գրությամբ Արթուր Չիլինգարյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարության 21.01.2022թ. թիվ ԱԱ/06.3/1254-2022 գրության հիման վրա, 31.01.2022թ. թիվ 26/26-1/1571-2022 գրությամբ նախաձեռնել է Արթուր Չիլինգարյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Արթուր Չիլինգարյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Արթուր Չիլինգարյանի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/37 ընթացակարգի շրջանակներում 10.02.2022թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ առողջապահության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ առողջապահության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 21.01.2022թ. թիվ ԱԱ/06.3/1254-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ Առողջապահության նախարարության 2022 թվականի կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռք բերման նպատակով 2021 թվականի դեկտեմբերի 10-ին կազմակերպել է «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-22/6» ծածկագրով գնման ընթացակարգ: Գնման ընթացակարգին մասնակիցների կողմից ներկայացված հայտերի գնահատման արդյունքում 1-ին և 2-րդ չափաբաժնների մասով հաղթող մասնակից է ճանաչվել «Արթուր Չիլինգարյան» կազմակերպությունը: Վերջինիս կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը (տեխնիկական բնութագիրը) համապատասխանել է հրավերի պահանջներին, սակայն մասնակցի կողմից ներկայացված դիմում հայտարարությունում բացակայել են՝ հարկ վճարողի հաշվառման համարը, բանկային հաշվեհամարը, գործունեության հասցեն, հեռախոսահամարը, էլեկտրոնային թվային ստորագրությունը, ինչպես նաև նշված չի եղել ձեռնարկության կազմակերպաիրավական տեսակը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի և հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.11 ենթակետի պահանջները 2022 թվականի հունվարի 3-ին «Արթուր Չիլինգարյան» կամակերպությանը տրվել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված

անճշտությունների շտկման հնարավորություն: Սակայն սահմանված ժամկետում մասնակցի կողմից չի ներկայացվել հրավերով պահանջվող դիմում հայտարարության (Հավելված 1) շտկված տարբերակը, որից հետո գնահատող հանձնաժողովը ընդունել է որոշում՝ մերժել «Արթուր Չիլինգարյանի» հայտը:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ Ձեր միջնորդությունը գնումների մասին օրենսդրությամբ սահմանված միջոցառումները իրականացնելու հարցում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/37 ընթացակարգի շրջանակներում 10.02.2022թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/37 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/37 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Արթուր Չիլինգարյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Արթուր Չիլինգարյանի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունում բացակայում է հարկ վճարողի հաշվառման համարը, բանկային հաշվեհամարը, գործունեության հասցեն, հեռախոսահամարը, էլեկտրոնային թվային ստորագրությունը, ինչպես նաև նշված չէ ձեռնարկության կազմակերպաիրավական տեսակը և 03.01.2022թ. Մասնակցին տրվել է շտկման հնարավորություն:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը 05.01.2022թ. որոշում է կայացրել Արթուր Չիլինգարյանի հայտն անբավարար գնահատելու վերաբերյալ:

4. ՀՀ առողջապահության նախարարությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի

կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ներկայացրել է 21.01.2022թ. թիվ ԱԱ/06.3/1254-2022 գրությամբ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 31.01.2022թ. թիվ 26/26-1/1571-2022 գրությունը, ՀՀ առողջապահության նախարարության 21.01.2022թ. թիվ ԱԱ/06.3/1254-2022 գրությունը և գործով առկա նյութերը հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն

հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Այսպես, ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-

2022/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Արթուր Չիլինգարյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Արթուր Չիլինգարյանի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունում բացակայում է հարկ վճարողի հաշվառման համարը, բանկային հաշվեհամարը, գործունեության հասցեն, հեռախոսահամարը, էլեկտրոնային թվային ստորագրությունը, ինչպես նաև նշված չէ ձեռնարկության կազմակերպաիրավական տեսակը և 03.01.2022թ. Մասնակցին տրվել է շտկման հնարավորություն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը 05.01.2022թ. որոշում է կայացրել Արթուր Չիլինգարյանի հայտն անբավարար գնահատելու վերաբերյալ:

ՀՀ առողջապահության նախարարությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ներկայացրել է 21.01.2022թ. թիվ ԱԱ/06.3/1254-2022 գրությամբ:

Վերը շարադրված փաստերով պայմանավորված և հիմք ընդունելով « ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/6» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրությունը՝ համաձայն որի ***05.01.2022թ.*** գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել Արթուր Չիլինգարյանի հայտն անբավարար գնահատելու վերաբերյալ, արձանագրում եմ, որ Արթուր Չիլինգարյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել ***05.01.2022թ***., սակայն Պատվիրատուն Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազորված մարմին ***21.01.2022թ.,*** որպիսի պայմաններում Պատվիրատուի կողմից խախտվել է Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը (այդ թվում՝ Մասնակցի տվյալները) լիազորված մարմին ներկայացնելու՝ Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետը:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումը որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Ընդ որում՝ համապատասխան ժամկետային սահմանափակումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և գործողությունները ժամանակին իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Այսպիսով՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում՝ Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

Այսպիսով՝ ժամկետային սահմանափակումները հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ, որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014թ. կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե՛ մինչև 25.12.2015թ. գործող

խմբագրությամբ, թե՛ ներկայումս գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Վերոգրյալ իրավական նորմերի մեկնաբանության և սույն գործի փաստական հանգամանքների համադրման արդյունքում արձանագրում եմ, որ տվյալ դեպքում Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետով սահմանված իմպերատիվ դրույթը՝ այն է հինգ աշխատանքային օր ժամկետը, քանի որ սույն ընթացակարգով հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրերն են հանդիսանում 07.01.2022թ.-ից մինչև 13.01.2022թ. ներառյալ, մինչդեռ՝ Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին Պատվիրատուն ներկայացրել է 21.01.2022թ. թիվ ԱԱ/06.3/1254-2022 գրությամբ: Ընդ որում՝ օրենսդրությունը չի նախատեսում նշված ժամկետը վերականգնելու ինստիտուտ:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել Արթուր Չիլինգարյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.01.2022թ. թիվ 26/26-1/1571-2022 գրությամբ Արթուր Չիլինգարյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**